

ինչպէս և Թորղանի Բարշամինայ-Միհրի, Բագայառիճի Հեփեստոն-Միհրի և Դիոս - Արամազդի արձանները և քուրմերն օտար՝ յունաց երկրից էին. ինչպէս ասում է Սորենացին. սակայն այսպիսի յիշատակութիւն չկայ Աշտիշատի Անահտի և Վասպուրականի Միհր-Մհերի մասին: Այսպիսով կարելի է գէթ մասամբ ևս բացատրել Երզնկայի Աստղիկի թշնամութիւնը, և այն շփոթութիւնները, որ կան մեր վէպում, որ արտայայտում է և Չմշկիկ սուլթանի և իւր ազնկայ դէպքում. եթէ միայն այստեղ չէ ազդել Յունաց և Հայոց կրօնական վէճերն, որ ոչ միայն Չմշկիկի ժամանակ այլ նորանից առաջ և յետոյ էլ եղել են: Մհերի առիւծաձև մակդերն անգամ, եթէ միայն այդ, ինչպէս հաւանական է, սկզբում վերաբերուել է և Պատիկ Մհերին, այժմ աւելի հասկանալի է դառնում. առիւծը ելամական Անահտին յատուկ էր. ինչպէս որ պատահական չէ անշուշտ, որ մեր «Անահայ ամբողջ» և Առիւծ լեւները¹ իրարից հեռու չպիտի լինին, իսկ Առիւծ դաւառը սահմանակից է Անահտին նուիրական Եկեղեցաց²—Անահտական³ դաւառին:

§ 8. Գրական արժէքաւոր նորութիւններ ևս ունի մեր այս № 14 փոփոխակը, որ միւսները չեն յիշում, և եթէ յիշում են, այն էլ կրճատուած, այսպէս Ը, § 67, որի հազիւ թէ կէսն ունին № 7, Ը, էջ 23 և № 10, Բ, էջ 424 և № 11, է, էջ 18: Մի կողմ թողնելով այլ մանրամասն համեմատութիւնները, վեր անհնք ամեն մի գրականութեան պատիւ բերող, կտրուկ ժողովրդական արտայայտութեան մի նմուշ § 84, 85: Առաջին պրակը § 84 Դաւթի հրաժեշտի երգն է կոիւ գնալիս, որ շատ փոփոխակներ հազիւ յիշատակում են, երբեմն բոլորովին տարբեր մէկ-երկու խօսքով, ինչպէս № 7, Թ, էջ 30. իսկ § 85 թշնամու բազմութեան քանակը ցոյց տուող պատկերաւոր համեմատութիւններ, որ ունի մասամբ դարձեալ № 7, ԺԱ, էջ 33, բայց այս աւելի լրիւ է և տարբեր չափով:

Ահա այդ երկու տունը.

§ 84. «Էլաւ թաւ վեր ձիուն, Ասածու անուն տուեց, քշեց խասաւ Ծովասարու մօտ. էն քեարերուց, ախպրներուց, սարերուց խալալութեն ուզեց: Մնաք բարով, ասաց ու սկսեց.

«Օրհնեալ բարերար Աստուած, ինամք շատ էր մեծ թագաւորուն.
Ծովասարու պող պող ախպրներ, մնացէք բարով, բարի մնացէք.

1. Բուզանդ Ե, ԻԵ, 224. Վենետիկ 1889:

2. H. Hübschmann, Armen. Ortsnamen, էջ 284—285, 402:

3. Ղ. Վ. Ինժիճեան. Ստորադր. Հին Հայաստանի էջ 45. Վենետիկ 1822: